

Վիճակագրական ժողովածուի մեջ մանրամասն ներկայացված են Հայաստանի Ազգային հաշիվների համակարգի ցուցանիշները 1990-1997թթ., ներառյալ 01.10.99թ. կատարված վերջնական ճշգրտումները (հետագայում փոփոխություններ չեն նախատեսվում): Սույն ժողովածուի մեջ ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարությունը հրատարակում է նախարարության կողմից կոնկրետ կիրառվող Հայաստանի համախառն ներքին արդյունքի հաշվարկման մանրամասն մեթոդաբանությունը:

Ժողովածուն նախատեսվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսավարող սուբյեկտների, միջազգային և այլ կազմակերպությունների ֆինանսատնտեսագիտական ծառայությունների, գիտական, ձեռնարկատիրական և բանկային շրջանակների, տնտեսագիտական ԲՈՒՀ-ների ուսանողների, ասպիրանտների և պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի համար, վիճակագրական տեղեկատվության այլ օգտագործողների, բոլորի համար, ում անհրաժեշտ է Հայաստանի տնտեսության վերաբերյալ օբյեկտիվ և խորը տեղեկատվություն:

Սույն ժողովածուն պատրաստված է հասարակությանը և բոլոր շահագրգիռ անձանց հիմնական մակրոցուցանիշների վերաբերյալ սպառիչ, թափանցիկ և մատչելի տվյալներ տրամադրելու նպատակով: Այս ժողովածուում տվյալների տարածման ընդհանուր համակարգի վերաբերյալ միջազգային ստանդարտներին համապատասխան, մանրամասն տեղեկատվություն է ներկայացված տվյալների պատրաստման ընթացքում օգտագործված մեթոդաբանության և տեղեկատվության աղբյուրների մասին, բացի այդ, ներկայացված է հիմնական ցուցանիշների բաղադրիչ տարրերի մասին տեղեկատվություն: Ժողովածուում ներկայացված է նաև հանրապետությունում Ազգային հաշիվների համակարգի տվյալների տարածման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան՝ ՀՆԱ-ի մշակման և վերանայման կանոնակարգը, որը համաձայնեցված է տվյալների տարածման ժամկետների և պարբերականության հետ:

В статистическом сборнике подробно представлены показатели системы национальных счетов Армении за 1990-1997 годы, включающие окончательные поправки, сделанные на 01.10.99г. (далее внесение изменений не предполагается). В этом же сборнике Министерство статистики, госрегистра и анализа РА представляет подробную методологию расчета ВВП конкретно применяемого министерством.

Сборник предназначен для органов государственного и местного самоуправления, для финансово-экономических служб, хозяйствующих субъектов, международных и других организаций, научных, предпринимательских и банковских кругов, профессорско-преподавательского состава, аспирантов и студентов экономических ВУЗов, других пользователей статистической информации для всех, кому нужна объективная и глубокая информация об экономике Армении.

Данный сборник подготовлен для распространения исчерпывающих данных и прозрачностей основных макроэкономических показателей, а также для доступа информации всем заинтересованным лицам и общественности. В этом сборнике в соответствии с международными стандартами по общей системе распространения данных, подробно приведены сведения о методологии и источниках информации, используемых при подготовке данных. Кроме этого приведены сведения о составных элементах основных показателей.

С учетом требований международных стандартов по распространению данных по системе национальных счетов представлен регламент разработки и пересмотра валового внутреннего продукта республики, который приведен в соответствие со сроками и периодичностью по распространению данных по международным стандартам.



Սույն ժողովածուն պատրաստվել է ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարության կողմից, իսկ տպագրական աշխատանքներն ապահովվել են Եվրամիության «TACIS» ծրագրի ֆինանսավորմամբ:

Настоящий сборник подготовлен Министерством статистики, государственного регистра и анализа РА, финансирование же типографических работ обеспечено программой “TACIS” Европейского Союза

Նախաբան

Սույն ժողովածուն հանդիսանում է Հայաստանի ազգային հաշիվների համակարգի, ինչպես նաև, դրա հետ կապված մոդելների և ցուցանիշների առաջին, առավել ամբողջական հրատարակությունը:

Ժողովածուն պատրաստել է ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարությունը տնտեսավարող սուբյեկտներից, այլ կազմակերպություններից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից և բնակչությունից պետական վիճակագրական մարմինների կողմից ստացված տվյալների հիման վրա՝ վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման և մշակման, ընտրանքային հետազոտությունների անցկացման և այլ ձևի վիճակագրական դիտարկումների ճանապարհով:

Ազգային հաշիվներն, արտագոյելով տնտեսական ակտիվների հոսքերի հիման վրա հաշվարկված ապրանքների և ծառայությունների արտադրության ու օգտագործման գործընթացները, ընդհանրացնող պատկերացում են տալիս տնտեսության գործունեության վերաբերյալ՝ որոշակի ժամանակաշրջանում: Հայաստանի ազգային հաշիվների կառուցման համար հիմք է հանդիսացել 1993թ. հրապարակված, Արժույթի միջազգային հիմնադրամի, Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Եվրպական համագործակցության հանձնաժողովի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից՝ որպես միջազգային ստանդարտ ընդունված մեթոդաբանությունը (ԱՀՀ-93)¹: Բերված են հիմնական դրույթները (տես I-VI գլուխները):

Ավելի մեծ ընդգրկում տալու համար նյութը սկսվում է 17 հիմնական տնտեսական ինդիկատոր-ինդեքսների ներկայացումից:

Առաջին անգամ հրատարակվում են 1996 և 1997թթ. ազգային հաշիվների ինտեգրացված աղյուսակները, որոնք արտագոյում են տնտեսության մեջ հիմնական արժեքային միջհատվածային հոսքերը: Աղյուսակը տվյալներ է պարունակում ըստ "տնային տնտեսությունների", "պետական հիմնարկների", "տնային տնտեսությունները սպասարկող ձեռնարկություններ և ոչ առևտրային կազմակերպություններ" և "արտերկիր" հատվածների:

Предисловие

Данный сборник является первой, наиболее полной публикацией по системе национальных счетов Армении, а также связанных с ней моделей и показателей.

Сборник подготовлен министерством статистики, государственного регистра и анализа Республики Армения на основе данных, получаемых органами государственной статистики от хозяйствующих субъектов, других организаций, органов государственного управления и местного самоуправления, населения путем сбора и обработки статистических отчетов, проведения выборочных обследований и других форм статистического наблюдения.

Национальные счета, отражающие процессы производства и использования товаров и услуг на основе учета потоков экономических активов, дают обобщенное представление о функционировании экономики в определенный период. Основой для построения национальных счетов Армении явилась методология, принятая в качестве международного стандарта Организацией Объединенных Наций, Международным Валютным Фондом, Мировым Банком, Организацией Экономического Сотрудничества и Развития и Коммисией Европейского Сообщества, опубликованная в 1993г. (СНС-93)². Приводятся основные положения (см. главы с I-VI).

Для придачи большего охвата материал начинается с представлением 17 основных экономических индикаторов-индексов.

Впервые публикуются интегрированные таблицы национальных счетов за 1996 и 1997гг., отражающая основные стоимостные межсекторальные потоки в экономике. Таблица содержит данные по секторам: "домашние хозяйства", "государственные учреждения", "предприятия и некоммерческие организации, обслуживающие домашние хозяйства" и "остальной мир".

¹ Ազգային հաշիվների համակարգ 1993թ. Բրյուսել / Լյուքսեմբուրգ, Նյու-Յորք, Փարիզ, Վաշինգտոն, 1993թ.

² Система национальных счетов 1993г. Брюссель /Люксембург, Нью-Йорк, Париж, Вашингтон, 1993г.

Ժողովածուն պատրաստվել է ՀՀ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի առաջին տեղակալ Ահարոն Զիլինգարյանի ընդհանուր ղեկավարությամբ

Сборник подготовлен под общим руководством первого заместителя Министра статистики, государственного регистра и анализа РА **Чилингаряна Агарона**

Ժողովածուի նյութերը պատրաստվել են ՀՀ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության մակրոտնտեսական ցուցանիշների և ԱՀՀ-ի բաժնի պետ Ջուլիետտա Միրզոյանի ղեկավարությամբ

Материалы сборника подготовлены под руководством начальника отдела макроэкономических показателей и национальных счетов Минстата РА **Мирзоян Джульетты**

Ժողովածուի բաժինների պատասխանատուները
Ответственные за разделы сборника

Մակրոտնտեսական ցուցանիշների և ԱՀՀ-ի բաժին Отдел макроэкономических показателей и национальных счетов		Հեռախոսահամարներ Телефоны
Միրզոյան Ջուլիետտա	Мирзоян Джульетта	52-43-26
Թամազյան Մանյա	Тамазян Маня	58-25-51
Աստվածատուրովա Նադեժդա	Аствацатурова Надежда	52-39-96

Համակարգչային շարվածք և այլ աշխատանքներ
Компьютерная верстка и другие работы

Խաչատրյան Մադլենա, Խաչատրյան Սուսաննա,
Բաբոյան Նաիրա, Սարգսյան Լուսինն, Ավետիսյան Լիանա
Хачатрян Марлена, Хачатрян Сусанна, Бабоян Наира,
Саркисян Лусине, Аветисян Лиана

Պայմանական նշաններ.
Условные обозначения:

երևույթը բացակայում է	-	явление отсутствует
տվյալները չկան	...	данных не имеется
չնչին մեծություն	0,0	небольшая величина

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան պարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

В отдельных случаях незначительные расхождения между итогом и суммой слагаемых объясняются округлением данных.



Քսաներորդ դարի 90-ական թթ. սկսած, երբ Հայաստանը սկսեց ազատական տնտեսակարգի կառուցումը, խնդիր առաջացավ նրա՝ համաշխարհային տնտեսությանն ինտեգրացվելու, ինչն ազատական տնտեսակարգի արդի փուլին բնորոշ «համընդհանուր գլոբալիզացիայի» գլխավոր առանձնահատկությունն է: Համաշխարհային տնտեսության, որպես ամբողջական համակարգի, տարրը (մասնիկը) կազմելու համար հարկ է մասնակից դառնալ այդ համակարգում տեղի ունեցող ինտեգրացման գործընթացներին: Ինտեգրացումն, առաջին հերթին, ենթադրում է երկրների «կոմունիկացիոն ունակությունների» համահարթեցում, միջազգայնորեն ընդունված և համընդհանուր ճանաչման արժանացած չափանիշներին ու ստանդարտներին համապատասխան:

Այդպիսիք, առաջին հերթին, կիրառվում են տեղեկատվության ու, հատկապես, վիճակագրական բնույթի սոցիալ-տնտեսական տեղեկատվության բնագավառում: Սոցիալ-տնտեսական ինտեգրացումը սկսվում է այդ բնագավառին վերագրվող միասնական չափորոշիչների կիրառմամբ՝ վիճակագրական մոնիտորինգով: Վիճակագրական «լեզուն» արդեն իսկ միջազգայնացված է և հանդիսանում է մակրոտնտեսական մակարդակով ինտեգրացման առաջին «բանալին»:


Վերոհիշյալով պայմանավորված, Հայաստանի վիճակագրությունը ձեռնամուխ է եղել միջազգայնորեն ընդունված չափանիշներով մշակված ազգային հաշիվների համակարգի վարման մեթոդաբանությամբ՝ Հայաստանի ազգային հաշիվների արտագրվման աշխատանքներին:

Այդ առումով սույն ժողովածուն իրենից ներկայացնում է Հայաստանում առաջին փորձը՝ 1990-1997թթ. ազգային հաշիվների արտագրման ուղղությամբ: Դրանով պայմանավորված, ժողովածուի մեջ ներառված են դրույթներ՝ ազգային հաշիվների համակարգի միջազգայնորեն կիրառվող մեթոդաբանությունից (հիմնական տերմիններ, եղանակներ, քաղվածքներ), ինչպես նաև, սույն ժողովածուում արձարձված ցուցանիշների համար հիմք հանդիսացած կոնկրետ (Հայաստանի վիճակագիրների կողմից միջազգային չափանիշների հիման վրա մշակված և կիրառվող) մեթոդաբանությունը:

Հուսով ենք, որ վերջիններս պայմաններ կընձեռնեն վիճակագրական տեղեկատվության սպառողների առավել ընդգրկուն կազմին՝ հնարավորինս անմիջականորեն ծանոթանալ Հայաստանում կիրառվող վիճակագրական մեթոդաբանության »նրբերանգներին« ու դրանց գիտական հիմնավորվածության աստիճանին: Հուսով ենք նաև, որ դրանով իսկ, փոքրիշարժ կբարձրանա վստահությունը Հայաստանի վիճակագրության նկատմամբ, քանզի ազատական փորձակարգի (հարկապես անցումային շրջանի) պայմաններում վիճակագրության բնագավառում առկա են »մեծ ռիսկեր«, որոնք անվերապահորեն անհրաժեշտ է անկեղծորեն կիսել վիճակագրական տեղեկատվության սպառողների հետ:

Ս. Մնացականյան

ՆՏ վիճակագրության, պետական
ռեգիստրի և
վերլուծության նախարար



Начиная с 90-х годов двадцатого века, когда в Армении началось формирование либерального экономического строя, возникла задача ее интеграции с международной экономикой, что является главной особенностью “всеобщей глобализации”, характерной для настоящего этапа рыночной экономики. Для того, чтобы стать элементом (частью) всемирной экономики, как целостной системы, необходимо участие в интеграционных процессах, происходящих в этой системе. Интеграция, в первую очередь, предполагает сглаживание “коммуникационных свойств” стран, в соответствии с принятыми и получившими всеобщее признание международными стандартами и критериями.

Также, в первую очередь, применяются в области информатики, и особенно, в области социально-экономической информации статистического характера. Социально-экономическая интеграция начинается с применения единых критериев относящихся к этой области - статистического мониторинга. “Язык” статистики уже интернационализирован и является первым “ключом” интеграции на макроэкономическом уровне.

Обусловленное вышеупомянутым, статистика Армении приступила к работе по отражению национальных счетов Армении на основе методологии учета системы национальных счетов, разработанной по международно принятым критериям.

В этом смысле, настоящий сборник представляет собой первую попытку в Армении, по направлению отражения национальных счетов за 1990-1997гг. Обусловленное этим, в сборник включены положения по международно применяемой методологии системы национальных счетов (основные термины, методы, выписки), а также, конкретная методология, послужившая основой для расчета показателей, приведенных в данном сборнике, разработанная на основе международных критериев и применяемая статистиками Армении.

Надеемся, что последние создадут условия для широкого круга потребителей статистической информации, более непосредственно ознакомиться с “оттенками” статистической методологии, применяемой в Армении и степенью ее научной обоснованности. Надеемся также, что этим самым повысится доверие к статистике Армении, т.к. в условиях либеральных экономических отношений (особенно в переходный период) в области статистики присутствуют “большие риски”, которыми, бесспорно, необходимо откровенно поделиться с потребителями статистической информации.

С. Мнацаканян

**Министр статистики, государственного
регистра и анализа РА**

Ереван, Февраль 2000г.